ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 8, 1965 Общественные науки

Ա. Խ. Սաֆրաստյան

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԵՐԻՈԴԻԶԱՑԻԱՅԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Թուրքիայի պատմության պերիոդիզացիայի հարցը դեռևս չի ուսումնասիրված։ Ներկա հոդվածում մենք կփորձենք ընդհանուր գծերով բարձրացնել այդ հարցը, քննելով այն երկու տեսանկյունից. ա) Թուրքիայի միջնադարյան պատմության պերիոդիզացիան մարքս-լենինյան ուսմունքի հիման վրա և բ) ժամանակակից թուրքական պատմագրության կողմից Թուրքիայի պատմության, մասնավորապես նրա միջնադարյան պատմության պերիոդիզացիայի հակագիտական փորձերի քննադատության հիման վրա։

* * *

Մարքս-լենինյան պատմական գիտությունը պատմական պրոցեսը դիտում է իբրև հասարակության սոցիալ-տնտեսական ֆորմացիաների օրինաչափ հաջորդում։ Միջին դարը մարդկության պատմական զարգացման այն փուլն է, երբ Ասիայի և Եվրոպայի երկրների մեծ մասում և Աֆրիկայի մի շարք երկրներում գերիշխում էր արտադրության ֆեոդալական եղանակը։ Միջին դարը դա արտադրության ֆեոդալական եղանակի, ֆեոդալական հասարակական հարաբերությունների ծագման, զարգացման և անկման դարաշրջանն է[1]։

Միջին դարերի պատմությունը բաժանվում է հետևյալ շրջանների.

1. Վաղ միջնադար
2. Ֆեոդալիզմի զարգացման շրջան
3. Ուշ միջնադար։

Միջին դարերի ֆեոդալական հասարակարգի պերիոդացման մարքս-լենինյան սկզբունքը, իբրև համաշխարհային պատմության պերիոդացման հիմնական սկզբունք, վերաբերում է նաև Արևելքին և միջնադարյան Թուրքիային։ Հետևաբար, Արևելքում ֆեոդալիզմի ծագման, զարգացման և քայքայման հարցը պետք է ուսումնասիրել մարքս-լենինյան սկզբունքով՝ հաշվի առնելով, սակայն, որ Արևելքում ֆեոդալական հասարակության զարգացումը ժամանակի տեսակետից միշտ չէ, որ համընկնում է Արևմուտքի երկրներում նրա զարգացման ժամանակաշրջանի հետ, որ եվրոպական երկրների համեմատությամբ Արևելքի երկրները սոցիալ-տնտեսական և հասարակական կյանքի զարգացման տեսակետից ևս ունեն որոշ առանձնահատկություններ։

Ինչպես առհասարակ ընդունված է պատմական գիտության մեջ, օսմանյան թուրքերը որոշ հասարակության ձևով Փոքր Ասիայում (Անատոլիայում) ապրել են 13-րդ դարի վերջից։ Հետևաբար, վաղ ֆեոդալիզմի դարաշրջանում օսմանյան թուրքերի նախահայրերը դեռևս Անատոլիայում չկային, նրանք ապրում էին Միջին Ասիայում, մոչվորական կյանքով և մաղամակերբական ցածր մակարդակով։ Անատոլիայում օսմանյան թուրքերի նախորդները սելջուկները, դեռևս Միջին Ասիայում, որոշ չափով յուրացրել էին վաղ ֆեոդալիզմի շրջանին հատուկ ֆեոդալական հարաբերությունները, պահպանելով հանդերձ ցեղային-աշիրեթական կազմակերպության վերապրուկները։ Անատոլիայի սելջուկները, որոնք հաճախ կոչվում են նաև Ռումի սելջուկներ, Փոքր Ասիայում 12—13-րդ դարերում ստեղծելով սելջուկյան պետությունը, որոշ չափով զարգացրել էին ֆեոդալական հարաբերությունները՝ պետական-վարչական, քաղաքական և, առանձնապես, տնտեսական բնագավառներում։ Ակադեմիկոս Վլ. Գորդլեվսկին, որը բազմակողմանի ուսումնասիրել է Փոքր Ասիայի սելջուկյան պետության ռազմա-ֆեոդալական կառուցվածքը, նրա բոլոր բնորոշ կողմերը, հողերի ավատական բաժանման թիմարի և զեամեթի սիստեմը,

---

[1] Всемирная история, т. III, стр. 7.

թիմարային հողերի վրա ապրող գյուղացիների՝ ռայաների կախվածությունը սիփահիներից, սիփահիների վասալական կախվածությունը մեծագույն ֆեոդալից՝ սուլթանից և այլն, իրավամբ նշում է. «Քանի որ օսմանցիները վերցրել և յուրացրել էին սելջուկյան դարաշրջանի վարչական մեթոդներն ու ձևերը, պարզ է, որ Ռումի սելջուկյանների ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի ժամանակակից Փոքր Ասիայի պատմությունը հասկանալու համար»[2].

Վ. Գորդլևսկու վերոհիշյալ աշխատության մեջ սելջուկյան պետության մասին բերված հարուստ և բազմազան նյութերից պարզվում է, որ «Անատոլիայի սելջուկները նվաճելով այդ երկիրը, մեկ կողմից հույների, բյուզանդացիների և մյուս կողմից վրացիների և հայերի ժառանգորդներն ու շարունակողները հանդիսացան»[3]: Անատոլիայի սելջուկները, գտնվելով իրենց նվաճած երկրների ժողովուրդներից ավելի ցածր քաղաքակրթական մակարդակի վրա, բնական է, որոշ ազդեցություն պիտի կրեին այդ քաղաքակիրթ ժողովուրդներից:

Փոքր Ասիայի սելջուկների և հետագայում օսմանյան պետության վաղ ֆեոդալիզմի զարգացման առանձնահատուկ պայմանների մասին խոսելիս անհրաժեշտ է նշել նաև իսլամական կրոնի որոշակի ազդեցությունը ինչպես Արևելքի շատ երկրներում, այնպես էլ Թուրքիայում:

Ֆ. Էնգելսը նշում է, որ ամենալայն չափով տարածված կրոններից մեկը՝ իսլամական կրոնը եղել է «պատմական մեծ շրջադարձ» այն երկրներում, ուր նա հանդիսացել է տիրապետող իդեալոգիա[4]: Թուրքիայի միջնադարյան պատմության մեջ (ինչպես նաև նրան հաջորդած դարաշրջաններում) իսլամական կրոնը և շարիաթը կարևոր գործոն են հանդիսացել և ուժեղ ազդեցություն գործել երկրի սոցիալ-տնտեսական, վարչական-քաղաքական և մտավորական կյանքի վրա:

Մերձավոր Արևելքում 11-րդ դարի վերջերից ֆեոդալական արտադրության եղանակն ու ֆեոդալական հարաբերությունները որոշակի զարգացում էին ապրել, երբ Փոքր Ասիայում կազմակերպվեց սելջուկյան կայսրությունը՝ Արևելքին հատուկ իր ռազմա-ֆեոդալական սիստեմով:

Հետևաբար, Թուրքիայի միջնադարյան պատմության ֆեոդալական ֆորմացիայի առաջին շրջանը՝ Փոքր Ասիայի կամ Ռումի սելջուկյան պետության վաղ ֆեոդալիզմի դարաշրջանն է:

14-րդ դարի սկզբում սելջուկյան պետության տարբեր մասերում կազմակերպվեցին բազմաթիվ թուրքական ինքնուրույն «բեյությունններ», որոնք Թուրքիայի պատմության մեջ հայտնի են Անատոլիայի բեյությունները (Anadolu bevlikleri) անունով: Դրանցից մեկն էր Օսմանյան բեյությունը (Osmanlı beyliği), որը 13-րդ դարի վերջում կազմակերպվեց արևմտյան Անատոլիայում:

Ինչպես հայտնի է, օսմանյան պետության հիմնադրման և նրա սկզբնական շրջանի պատմությունը՝ Էրթուղրուլ, Օսման և Օրհան բեյերի, նույնիսկ սուլթան Մուրադի և սուլթան Բայազիդի իշխանությունների շրջանի պատմությունը ավանդական բնույթ ունի: Թուրք պատմաբան Ի. Հ. Դանիշմենդը ասում է. «Մինչև Ստամբուլի դրավումը օսմանյան պատմությունը չի արձանագրվել, եթե արձանագրված էլ է, ապա կարևոր ոչինչ չի պահպանվել, որովհետև Օսման Ղազիի ծնունդից սկսած երկու դարերի երկարատև շրջանը գրեթե ամբողջությամբ մթության մեջ է»[5]: Օսմանյան պետության ծագման հարցը դեռևս լրիվ չի պարզաբանված: Մի շարք թուրք և օտար պատմաբաններ զբաղվել են և մինչ այժմ էլ դեռ զբաղվում են այդ հարցի լուսաբանմամբ[6]:

Քանի որ այդ հարցի քննարկումը անմիջականորեն կապված չէ ներկա թեմայի հետ, մենք կբավականանանք, նշելով միայն այն, ինչը այլևս անվիճելի է և ընդունված այդ հարցի գրեթե բոլոր ուսումնասիրողների կողմից:

---

[2] В. Гордлевский, Государство Сельджукидов Малой Азии, М.—Л., 1941, стр. 183—184.

[3] Սույն տեղում (ընդգծումը մերն է—Ա. Ս.):

[4] См. К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XIV, стр. 646.

[5] I. H. Danişmend. İzahlı Osmanlı tarihi Kronolojisi, İstanbul, 1947, c. I, s. III.

[6] Օսմանյան պետության ծագման հարցի մասին տե՛ս՝

ա) Koprulu M. F. Les origines de l'Empire Ottoman, Paris, 1925.

բ) Osmanlı imperatorlugunun etnik menşei. „Belleten", sayı 28, 1943, s. 219—303.

գ) Gibbons. H. A. The fondation of the Ottoman Empire, Oxford, 1916 (կա նաև թուրքերեն թարգմանություններ):

Թուրքիայի, օսմանյան պետության պատմությունը սկսվում է այն ժամանակից, երբ թուրքերը Անատոլիայի հյուսիս-արևմտյան մասում կազմակերպեցին Օսմանյան բեյությունը՝ Օսման բեյի գլխավորությամբ: Վերջինս անկախության հասավ 1299 թվականին:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ թուրք ժողովրդի և նրա պատմության մասին ժամանակակից թուրք պատմաբանների հորինած «նոր տեսակետները» չեն կարող որևէ չափով հիմք հանդիսանալ Թուրքիայի պատմության պերիոդիզացիայի համար: Եթե, այնուամենայնիվ, մենք խոսում ենք պատմության պերիոդիզացիայի հարցում նրանց կատարած հակադիտական փորձերի մասին, ապա միայն մի նպատակով, ցույց տալ, որ ժամանակակից թուրք պատմագրությունը ենթագիտում է նաև բուն թուրք ժողովրդի պատմությունը:

Թուրքիայում ֆեոդալիզմի երկրորդ շրջանի, այսինքն՝ ֆեոդալիզմի զարգացման ու ծաղկման դարաշրջանի մասին կարելի է խոսել, հենվելով պատմական տվյալների և փաստերի վրա: Դա հզոր Օսմանյան կայսրության մոտ երկու դար շարունակվող նվաճումների և աշխարհակալությունների շրջանն էր, երբ ռազմա-ֆեոդալական այդ պետությունը մեծ չափով ընդարձակելով իր սահմանները և իր տիրապետությանը ենթարկելով բազմաթիվ ժողովուրդների, ստեղծեց ռազմա-ֆեոդալական հարաբերությունների սիստեմի զարգացման հիմքը: Այս դարաշրջանը ընդգրկում է օսմանյան պետության պատմությունը 14-րդ դարի վերջերից մինչև 16-րդ դարի վերջը:

Օսմանցիների արագ և լայնածավալ նվաճումները, թուրքական սրի փայլուն հաղթանակները որոշ չափով կասեցվեցին պատմական երկու մեծ դեպքերով՝ Լենկթեմուրի արշավանքով և գյուղացիական ապստամբական շարժումներով: Ինչպես հայտնի է, 15-րդ դարի սկզբին Թեմուրի հորդաները ներխուժեցին Անատոլիա: Մարքսը իր «Ժամանակագրական քաղվածքներում» հիանալի կերպով բնութագրում է երկու մահմեդական իշխողների՝ Թեմուրի և սուլթան Բայազիդի դաժան ու վճռական պայքարը. «1400 թվականին, երբ Բայազիդ I-ը զբաղված էր Կոստանդնուպոլսի պաշարումով, Թեմուրը սկսեց սպառնալ նրան Հայաստանի կողմից... Թեմուրի և Բայազիդի միջև պատերազմի առիթ հանդիսացավ Թեմուրի թաթարների առաջխաղացումը Հայաստանից և Վրաստանից դեպի հին Պոնտոս և սուլթան Բայազիդի միջնաբերդը հանդիսացող Ամասիա: Թեմուրը Բաղդադը գրավեց 1400 թ., 18-օրյա պաշարումից հետո, գրավեց Սվազը, որը այդ ժամանակ հարյուր հազար բնակիչ ուներ[7]... Օսմանցիները կատարյալ պարտություն կրեցին... Թեմուրի քաղաքականությունն էր տանջել, կոտորել և ոչնչացնել հազարավոր կանանց, երեխաների և տղամարդկանց, ամեն կողմ սարսափ տարածել...»[8]:

Թեմուրի հասցրած ուժեղ հարվածները ցնցեցին Օսմանյան կայսրությունը, լուրջ վտանգի ենթարկեցին անգամ նրա գոյությունը: Հայտնի է, որ սուլթան Բայազիդի մահից հետո սկսված միջիշխանության շրջանը շարունակվեց 12 տարի: Ժամանակակից թուրք պատմաբան Ի. Հ. Ուզունչարշըլը սրտի կսկիծով նշում է, որ օսմանյան պետությանը Թեմուրի հասցրած մեծ հարվածի հետևանքով 70 տարով դադարեցին Թուրքիայի նվաճումները[9]:

16-րդ դարում, երբ Օսմանյան կայսրությունը հասել էր իր հզորության գագաթնակետին, ռազմա-ֆեոդալական պետության վարած անընդհատ պատերազմները, որոնք երկիրը հասցրեցին տնտեսական քայքայման, ինչպես նաև գյուղացիական մասսաների ֆեոդալական անողոք շահագործումը խոր դժգոհություն առաջացրին Անատոլիայի գյուղացիության շրջանում: Այդ ժամանակ էլ երկրում ծայր առան Ջելալիական գյուղացիական ապստամբությունները, որոնք Թուրքիայի պատմության մեջ անվանվում են «ավազակային շարժումներ»: Ապստամբական այդ շարժումները որոշ ընդհատումներով շարունակվեցին մինչև 17-րդ դարի վերջերը:

Էնգելսը հետևյալ կերպ է բնութագրում առհասարակ միջնադարյան գյուղացիական ապստամբությունները. «Ֆեոդալիզմի դեմ ռևոլյուցիոն օպոզիցիան շարունակվում է ամբողջ միջնադարում: Նա երևան է գալիս ժամանակի և պայմանների համաձայն, երբեմն միստիկ ձևով, երբեմն բացարձակ հերետիկոսության ձևով, երբեմն էլ շեշտված ապստամբության ձևով»[10]: Այդպիսին էր նաև Թուրքիայի գյուղացիական ապստամբությունը:

Մինչև 16-րդ դարի վերջը տևող ֆեոդալիզմի երկրորդ շրջանում մասնավորապես սուլթան Սուլեյման Կանունիի իշխանության ժամանակ Օսմանյան կայսրությունն իր գերիշխանությունն էր հաստատել Մերձավոր Արևելքի հսկայածավալ տերիտորիաներում՝ Անատոլիայում, Միջ-

---

7 *Սվազի բնակիչների ճնշող մեծամասնությունը կազմում էին հայերը:*

8 К. Маркс, Хронологические выписки, т. IV, стр. 168—171.

9 *Տե՛ս* I. H. Uzunçarşili, Osmanli tarihi, c. I, s. 168.

10 Ф. Энгельс, Крестьянская война в Германии, М., 1952, стр. 33.

դետքում, Եգիպտոսում, ինչպես նաև Բալկանյան թերակղզու գրեթե բոլոր երկրներում։ Սուլթանական ռազմա-ֆեոդալական պետության այս դարաշրջանը ժամանակակից թուրք պատմաբանները անվանում են «պատմության թուրքական դար» և փառաբանում ու գովերգում են այն։

Թուրքական ֆեոդալիզմի պատմության երկրորդ շրջանի ամենակարևոր իրադարձություններից է թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի գրավումը 1453 թ.։

Սովետական պատմագրությունը բյուզանդական պետության անկման պատճառների շարքում, թուրքական ռազմական ուժի հզորությունից բացի, կարևոր տեղ է տալիս Բյուզանդական կայսրության ներքին, սոցիալ-տնտեսական կյանքի քայքայմանը, ժողովրդական մասսաների աղքատացմանը, դասակարգային հակասությունների ուժեղացմանը, ինչպես նաև ֆեոդալական վերնախավերի դավաճանական քաղաքականությանը[11]։

Կ. Պոլսի գրավումը „Tarih"-ը գնահատում է այսպես.

«Թուրքիայի կողմից Ստամբուլի գրավման հետևանքով վերացավ մոտ հազար տարի գոյություն ունեցած Արևելյան Հռոմեական կայսրությունը... Ստամբուլի գրավումը համաշխարհային իրադարձություն եղավ։ Այն համարվել է միջնադարի վերջը և նպաստել մարդկության ու քաղաքակրթության նոր դարաշրջանի սկզբնավորմանը»։ Ներբողելով Ստամբուլի գրավումից հետո թուրքերի կատարած «բարձր մարդասիրական» և «կուլտուրական» գործերը, „Tarih"-ը ավելացնում է. «Սուլթան Մեհմեդը քաղաքի քրիստոնյա բնակչությանը մեղմ վերաբերմունք ցույց տվեց և հրամայեց, որ ամեն կողմ ցրված Ստամբուլի հույները քաղաք վերադառնան, հայտարարելով նրանց կրոնի լրիվ ազատությունը, նրանց ունեցվածքի և կալվածքների անձեռնմխելիությունը...»[12]։ «Բալկաններում քրիստոնյա գյուղացիները թուրքական վարչության ներքո վասիլյոսների և թագավորների ժամանակից ավելի երջանիկ և բարեբաստիկ կյանքի արժանացան»[13]։ „Tarih"-ը օսմանյան սուլթաններին քննադատում է քրիստոնյա ժողովուրդներին տրված այն «շնորհումների» համար, որոնք, նրա ասելով, հետագայում մեծ վնասներ պատճառեցին կայսրությանը[14]։

Պատմական իրականությունը և փաստերը ենթագրող նման արտահայտություններով և մտքերով լի են, գրեթե առանց բացառության, ժամանակակից թուրք պատմաբանների աշխատությունները, որոնք հիմնականում պաշտպանում են „Tarih"-ի արտահայտած շովինիստական գաղափարները։

Ըստ Դանիշմենդի, սուլթան Ֆաթիհը ոչ միայն չի ավերել Ստամբուլի կուլտուրական հուշարձանները, այլ նույնիսկ «պահպանել է և հովանավորել»։ Հեղինակի ասելով, Այա-Սոֆիան և մյուս եկեղեցիները ջամիի վերածվելը հիմք է հանդիսացել դրանց դարերով պահպանվելու համար (?)։

Դանիշմենդը եզրակացնում է. «Համենայն դեպս, կասկածից վեր է, որ թուրքական նվաճումը խորտակեց Բյուզանդական կայսրությունը, բայց փրկեց Ստամբուլը»[15]։

Պատմական փաստերի ենթագրմամբ ժամանակակից թուրք պատմաբաններին չի հաջողվի փոխել այն, ինչ համաշխարհային պատմագրության մեջ ընդունված է ընդհանրապես։ Ահա այդ փաստերից միայն մի քանիսը։ «...1453 թ. մայիսի 29-ի լուսաբացին թուրքական զորքերը ներխուժեցին քաղաք և փողոցային մարտերից հետո տիրելով քաղաքին (Կ. Պոլսին), այն ենթարկեցին եոթնյա ջարդի։ Ավերված քաղաքի պատկերը սոսկալի էր։ Ականատեսի պատմելով, շատ տեղերում գետինը չէր երևում բազմաթիվ դիակների պատճառով։ Մոտ 60 հազար բնակիչ ստրկացվեց։ Կողոպտվեցին ու հրո ճարակ դարձան սքանչելի տաճարներն ու պալատները, ոչնչացվեցին արվեստի բազմաթիվ գեղեցիկ հուշարձաններ...։ Բյուզանդիայի և Բալկանյան թերակղզու մյուս երկրների նվաճումը թուրքերի կողմից խիստ բացասական հետևանքներ ունեցավ այդ երկրներում բնակվող ժողովուրդների բախտի համար։ Դա երկար ժամանակով արգելակեց հարավ-արևելյան Եվրոպայի երկրների հետագա տնտեսական զարգացումը, հասցրեց նրանց արտադրողական ուժերի անկման և քայքայման»[16]։

---

[11] Տե՛ս „Византийский временник" ամսագրի 1953 թ. 7-րդ համարում տպագրված հոդվածները։

[12] „Tarih", III c., Yeni ve yakın zamanlar, Istanbul, 1933, s. 33, 36.

[13] Նույն տեղում։

[14] Մենք բավական մանրամասն նշումներ ենք անում „Tarih"-ից, որովհետև նա ժամանակակից թուրքական պատմագրության հիմնական տեսակետների արտահայտիչն է։

[15] Դանիշմենդ, նշվ. աշխ., էջ 258։

[16] Всемирная история, т. III, стр. 765.

Մարքսը իր «Ժամանակագրական քաղվածքներում» բազմաթիվ կոնկրետ փաստերով ցույց է տալիս թուրքական տիրապետության թալանչիական բնույթը և նվաճված երկրների ազգաբնակչության համար նրա կործանարար ազդեցությունը[17]։ Բուլղարացի գիտնական Իվան Սնեգարովը դրում է. «Թուրքական տիրապետությունը, սկզբից մինչև վերջ, թուրք սուլթանների և նրանց ծառայող ֆեոդալների տնտեսական, քաղաքական և բարոյական ճնշումները, իրականության մեջ եղել են «խավար գերություն»...։ Ազգաբնակչությունը ենթարկվեց բազմաթիվ և բազմատեսակ հարկերի և պարտավորությունների... Հատկապես 16-րդ դարի վերջերին աղքատությունն այն աստիճանի հասավ, որ գյուղացիները կարոտ մնացին անգամ մի պատառ հացից»[18]։ Ինչպես հեգնանքով նշում է Սնեգարովը, հավանաբար այդ պատճառով թուրքական արքունական տարեգիրները սիրում են գյուղացիներին անվանել «աղքատ ռայաներ»։

Մ. Վ. Լևչենկոն, Կոստանդնուպոլսի գրավման 500-ամյակի կապակցությամբ գրած իր հոդվածում ասում է, որ «թուրքական զավթիչները Բալկանյան թերակղզում շրջեցին ո՛չ ավելի զարգացած արտադրական հարաբերություններ, ո՛չ ավելի բարձր կուլտուրա։ Թուրքական պետությունը հիմնվեց իբրև ռազմա-ֆեոդալական կողոպտիչ պետություն»[19]։

Միջնադարի թուրքական պատմագիր-տարեգիրներն ևս իրենց «Թարիխ»-ներում հիշատակում են բազմաթիվ փաստեր, որոնք պերճախոս կերպով հերքում են ժամանակակից թուրք պատմագրության առասպելները թուրքերի, թուրք վեհապետների «մարդասիրության», նվաճված ժողովուրդներին «մեղմ վերաբերմունք» ցույց տալու մասին[20]։

Ինչպես նշում է Ա. Ս. Տվերիտինովան, ժամանակակից մոլի-շովինիստ և պանթյուրքիստ պատմաբանները փորձում են «վերանայել» ոչ միայն բուրժուական պատմաբանների, այլ նաև միջնադարի թուրք արքունական տարեգիր-պատմագիրների (Tarihnuvis) հաղորդած փաստերը Թուրքիայի միջնադարի պատմության մասին[21]։

* *

Թուրքական ֆեոդալիզմի երրորդ, այսինքն՝ նրա անկման ու քայքայման շրջանը սկսվում է 16-րդ դարի վերջից և շարունակվում է երկու դար։ Չնայած ֆեոդալիզմի քայքայումը Թուրքիայում սկսվել էր սուլթան Սուլեյման Կանունիի իշխանության վերջին տարիներից, սակայն, ինչպես հայտնի է, Արևելքի շատ երկրների նման, Թուրքիայում էլ ֆեոդալական հարաբերությունները և կարգերը պահպանվեցին դեռ երկար ժամանակ, և բուրժուական հեղափոխության շրջանը Արևելքի որոշ երկրներում, այդ թվում և Թուրքիայում, սկսվում է անհամեմատ ավելի ուշ, քան Արևմուտքի բազմաթիվ երկրներում։

Այս դարաշրջանը Թուրքիայի միջնադարյան պատմության ամենաբարդ շրջանն է, երբ ֆեոդալական կարգերի թուլացման և քայքայման հետևանքով դեպի անկում է գնում նաև օսմանյան ռազմա-ֆեոդալական հզորությունը, նվաճումներին փոխարինում է տեղատվության պրոցեսը, որը ավելի է ուժեղանում ու խորանում հսկայածավալ և երկարատև գյուղացիական ապստամբական շարժումներով, Օսմանյան կայսրության թե՛ Արևելքում, թե՛ Արևմուտքում տեփական և կատաղի պատերազմներով։

Ո՛չ միջնադարի թուրք պատմագիրները, ո՛չ էլ ժամանակակից թուրք պատմաբանները չեն կարողացել երևան հանել և բացատրել միջնադարյան Օսմանյան ռազմա-ֆեոդալական կայսրության անկման իսկական պատճառները։ Նրանք չեն տեսնում և չեն ուզում տեսնել, որ ֆեոդալական Թուրքիայի անկման պատճառներն ունեն սոցիալ-տնտեսական խոր արմատներ, որ

---

17 Տե՛ս К. Маркс, Хрон. выписки, том IV, стр. 104, 108, 207; т. VII, стр. 203, 215; т. VII, стр. 202, 209.

18 Акад. И. Снегаров, Турецкое владичество прека за културното развитие на болгарская народ и другита балкански народи. София, 1958, стр. 195—206.

19 М. В. Левченко, Завоевание турками Константинополя в 1453 г., «Виз. врем.», т. VII, стр. 7.

20 Տե՛ս մեր «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», Ա հատոր, էջ 33—35, 46—47 («Թարիխ Փեչևի»), էջ 107—108 («Թարիխի Նայիմա»), էջ 154—155 («Թարիխի Ջելեբի-Զադե»), էջ 276—279 («Թարիխի Ջևդեթ»)։

21 А. С. Тверитинова, Фальсификация истории Средневековой Турции в кемалистической историографии. Виз. врем., т. VII, 1959, стр. 9—32.

17-րդ դարից ուժեղացող ֆեոդալական կենտրոնախույս ուժերը աստիճանաբար թուլացրել էին կենտրոնական սուլթանական կառավարական օրգանիզմը, որ ֆեոդալները սկսած սուլթանից, վեզիրներից և փաշաներից և վերջացրած հասարակ սիպահիներով, ծայր աստիճանի էին հասցրել գյուղացիների վրա անտանելի բեռան նման ծանրացած բազմաթիվ և բազմատեսակ «օրինական» և «ապօրինի» հարկերը և պարտավորությունները, որ գյուղացիների, նրանց տերմինով՝ «ռայաների» անողոք շահագործումը պատճառ հանդիսացավ գյուղացիների մասսայական փախուստներին և ապստամբական շարժումներին: Անհրաժեշտ է հիշել նաև օսմանյան ռազմա-ֆեոդալական դաժան լծի տակ հեծող բազմաթիվ ժողովուրդների ազատագրական շարժման հետզհետե բարձրացող ալիքները՝ Թուրքիայի Եվրոպական մասում և Անատոլիայում:

Այդ բոլոր գործոնները միասին վերցրած խարխլեցին սուլթանական ֆեոդալական կարգերի տնտեսական, վարչական և ռազմական երբեմնի հզորությունը և Թուրքիային տարան դեպի անխուսափելի անկում:

* *

Անցնում ենք հարցի երկրորդ տեսանկյանը:

Ինչպե՞ս են պերիոդիզացիայի ենթարկում Թուրքիայի պատմությունը թուրք պատմագիրները, մասնավորապես ժամանակակից թուրք պատմաբանները:

Բուն հարցին անցնելուց առաջ անհրաժեշտ է համառոտակի կանգ առնել ժամանակակից թուրքական պատմագրության մեջ առաջ քաշված և ուժեղ կերպով պաշտպանվող «բուրք ժողովուրդ» հասկացողության վրա: «Թուրքիայի պատմության պերիոդիզացիայի հարցը վերջին ժամանակներս ստանում է ակադեմիական հետաքրքրության շրջանից շատ հեռու գնացող նշանակություն: Հանրապետական Թուրքիայում անընդհատ փորձեր են արվում թուրք ժողովրդի պատմության սկիզբը տանել դեպի այնպիսի հեռավոր անթափանցելի դարեր, որ դեռևս չի կարող թափանցել բարեխիղճ հետազոտողի հայացքը»[22]:

Ժամանակակից թուրք պատմագրության նման փորձերի հիմնական նպատակն է մարդկության պատմության մեջ երևան եկած բոլոր թրքախոս ժողովուրդներին մի հայտարարի բերելով, անվանել «բուրք ցեղ» (Türk irki) և դրանից հետևելով, բոլոր ժամանակների և բոլոր երկրների թրքախոս ժողովուրդների պատմությունը անվանել «բուրքական պատմություն» (Türk tarihi), իսկ բոլոր թուրքական ցեղերի և խմբերի լեզուները՝ «բուրքական լեզու» (türk dili) և այլն, մի բան, որը հանդիսանում է պանթյուրքիզմի ոգեկցիոն զաղափարախոսության ժամանակակից արտահայտությունը:

Թուրք պատմագիրներն ու պատմաբանները գիտության հետ ոչ մի կերպ չառնչվող ծայրաստեղ շովինիստական նպատակներով թուրք ժողովրդի (մենք նկատի ունենք օսմանյան թուրքերի) պատմության սկիզբը հետ են տանում և հասցնում պատմության հնագույն դարերը, որպեսզի դրանով ցույց տան և «ապացուցեն», որ բուրք ժողովուրդը, նրա պատմությունը, լեզուն և կուլտուրան սկիզբ են առել և զարգացել հնագույն դարերից: «Նրանք փորձում են Օսմանյան կայսրությունը ներկայացնել ոչ թե իբրև մի նոր կազմակերպություն, այլ իբրև թուրքական ժողովուրդների պատմության մեջ մեկ դարաշրջանի փոխարինումը մեկ այլ դարաշրջանով»[23],

Պատմական բազմաթիվ փաստերով ապացուցված է, որ նույնքան անհիմն ու շինծու է նաև ժամանակակից թուրք պատմաբանների այն միտքը, թե իբրև բուրքական ժողովուրդների պատմությունը տասնյակ դարերի ընթացքում զարգացել է «խաղաղ և սահուն կերպով», թե աշխարհի տարբեր մասերում բուրքերի հիմնած բազմաթիվ պետությունները իրար են փոխարինել և. վերջապես, թե օսմանյան թուրքերի ստեղծած պետությունը (Օսմանյան կայսրությունը) այդ շղթայի օղակներից մեկն է:

Որտե՞ղ է այդ «խաղաղ և սահուն աստիճանական փոխարինումը», երբ թուրքական ցեղերի պատմությունը արյունալի պատերազմների, կոտորածների մի երկար շղթա է:

Կարելի էր անուշադրության և լռության մատնել համաշխարհային և թուրք ժողովրդի պատմությունը «նորից գրելու», թուրքերի հանդեպ իբրև «թշնամական ոգով» գրված պատմությունը «վերանայելու» և «ուղղելու» թուրք պատմաբանների փորձերը, եթե թուրք պատմագրու-

---

22 Е. А. Беляев, Периодизация средневековой истории Турции, «Известия АН СССР», т. IV, № 1. 1947, стр. 85.

23 Б. Т. Горянов, Фальсификация истории турецкого завоевания и военно-феодального строя османской Турции в трудах Запада и США. «Տեղեկագիր» (Հասարակական գիտություններ), Երևան, 1953, № 10, էջ 37։

թյուններ չհետապնդեր շատ ավելի հեռու տանող նպատակներ, Թուրքիայի և թուրքերի պատմության հետ միաժամանակ չենթադրվեին և չկեղծեին նաև օսմանյան պետության իշխանության տակ գտնված բազմաթիվ ժողովուրդների՝ հայերի, հույների, բալկանյան և այլ ժողովուրդների պատմությունը[24]։

Պատմությունը «վերանայելիս» այդ փորձերը կատարվում են Թուրքական հանրապետության դեկավար շրջանների անմիջական թելադրությամբ, նյութական և բարոյական աջակցությամբ՝ թուրքական ժողովրդական լայն մասսաների դասակարգային գիտակցությունը մթագնելու, նրանց մոլի-շովինիստական և ազգային սնապարծության զգացմունքներով դաստիարակելու նպատակով։

Ժամանակակից թուրքական պատմագրության մեջ արմատացած պանթյուրքիստական ձգտումները, թուրք ժողովրդի, նրա պատմության, լեզվի և կուլտուրայի մասին «թուրքիստների» հավակնությունները չեն կարող քննարկման հիմք հանդիսանալ, քանի որ դրանք գիտականորեն չեն հիմնավորված և չեն ընդունված համաշխարհային պատմագրության մեջ։

Ժամանակակից թուրք պատմաբանները Թուրքիայի ամբողջ պատմության պերիոդիզացիայի հարցը քաոսի են վերածել։ Դրեթե ամեն հեղինակ ունի և պաշտպանում է իր «պերիոդիզացիան»։ Հիշատակենք դրանցից միայն կարևորները։

Նախապես նշենք, որ միջնադարյան թուրք տարեգիր-պատմագիրները պատմությունը պարզապես բաժանել են ըստ սուլթանների իշխանության շրջանների։ Թվով 36 սուլթանների իշխանության շրջանները կազմել են օսմանյան պատմության առանձին գլուխները։

Թուրքիայի նոր շրջանի տարեգիր-պատմագիր Արգուրրահման Շերեֆն իր երկհատոր «Թարիխ-ի Օսմանիի» մեջ պերիոդացումը կատարում է ըստ կարևոր քաղաքական դեպքերի։

1. Օսմանյան պետության առաջացման դարաշրջան . . . . 1300—1403 թթ.
2. Զարգացման և ամրապնդման դարաշրջան . . . . . 1403—1513 թթ.
3. Փառքի և բախտավորության դարաշրջան . . . . . 1513—1595 թթ.
4. Կանգառման դարաշրջան . . . . . 1595—1656 թթ.
5. Քյոփրյուլյուների դարաշրջան . . . . . 1656—1677 թթ.
6. Ֆազըլ Ահմեդ փաշայի մահից մինչև Յասսիի դաշնագիրը . . 1677—1792 թթ.
7. Բարենորոգումների և ստաջադիմության դարաշրջան . . . 1792—1856 թթ.

Արգուրրահման Շերեֆի դարաշրջանների բաժանումը հիշեցնենք իրեն օրինակ՝ ցույց տալու համար, որ այս և հետագա դարաշրջանների բաժանումները կատարված են քմահաճ կերպով և զուրկ են որևէ գիտական արժեքից։

Ժամանակակից թուրք պատմաբաններ Ի. Հ. Ուզունչարշըլը և Էնվեր Զիյա Կաբալը իրենց լիակատար «Օսմանյան պատմության» մեջ (8 հատոր) դարաշրջանների բաժանման համար նույնպես հիմք են ընդունել կարևոր քաղաքական դեպքերը։ Այս պատմաբանների «Օսմանյան պատմություն»-ները «Թուրքական պատմության ընկերության» (Turk Tarih Kurumu) հրատարակած բազմահատոր «Համաշխարհային պատմության» (մոտ 45 հատոր) մասն են կազմում։

Ուզունչարշըլը ժամանակակից Թուրքիայի հայտնի պատմաբաններից է. նրա և Է. Զ. Կաբալի «Պատմություն»-ների մասին գրած գրախոսականում բուլղար թուրքագետներ Վ. Մութաֆչիևան և Ս. Դիմիտրովը անդրադառնալով հատկապես պերիոդիզացիայի հարցին, գրում են.

«Պերիոդիզացիայի հիմքում դրված են ոչ թե կայսրության հասարակական-տնտեսական զարգացման փուլերը, այլ քաղաքական դեպքերը։ Այլ խոսքով ասած, Ուզունչարշըլը ընդունում է բուրժուական հին պատմագրության և մասնավորապես Համմերի պերիոդիզացիան»[25]

Ժամանակակից թուրք պատմաբան Ի. Հ. Դանիշմենդը իր քառահատոր «Օսմանյան պատմության բացատրական ժամանակագրությունը» կազմել է դարձյալ ըստ առանձին սուլթանների կառավարման շրջանների։

---

[24] Այս հարցի մասին տե՛ս 1) М. Нерсисян, Фальсификация истории народов Закавказья в современной американо-английской и турецкой реакционной историографии. «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1954 թ., № 7, էջ 47—55։ 2) Արևելագիտության ժողովածու, 1, Երևան, 1960, Ե. Սարգսյանի և Ա. Սաֆրաստյանի հոդվածը, «Պատմության հակագիտական մի քանի փաստերի մասին», էջ 379—398։

[25] В. Мутафчиева и С. Димитров, Некоторые замечания по новому общему курсу османской истории, «Народы Азии и Африки», 1964, № 3, стр. 150—161.

Պանթյուրքիստ պատմաբանները, այսինքն նրանք, ովքեր բոլոր ժամանակների և բոլոր երկրների թուրք-թաթարական ցեղերի և ժողովուրդների պատմությունը համարում են իբրև „Türk tarihi", նախապատմական դարաշրջանից սկսած պատմությունը բաժանում են գիտական ոչ մի հիմք չունեցող դարաշրջանների։

Օրինակ, ժամանակակից թուրքական պատմագրության հիմնական աղբյուրը հանդիսացող «Թարիխը», «Թուրք» ժողովուրդների պատմությունը բաժանում է չորս հիմնական դարաշրջանների՝

1. Նախապատմական և հին ժամանակներ («Թարիխի» 1-ին հատոր)
2. Միջին դարեր (2-րդ հատոր)
3. Նոր և նորագույն ժամանակներ (3-րդ հատոր)
4. Թուրքական հանրապետության շրջան (4-րդ հատոր)։

Ինչպես տեսնում ենք, «Թարիխի» այս բաժանումը չի համապատասխանում նույնիսկ բուրժուական պատմագրության հին, միջին և նոր դարաշրջանների բաժանման տրադիցիոն սկզբունքին։

* *

Եզրակացնենք.

1. Թուրքիայի միջնադարյան պատմության դարաշրջանը հիմնականում համապատասխանում է ֆեոդալիզմի հասարակարգին։

2. Օսմանյան թուրքերը ֆեոդալական դարաշրջանի երեք շրջաններն ապրել են յուրահատուկ կերպով։ Փոքր Ասիայի կամ Ռումի սելջուկները, օսմանցի թուրքերի նախորդները, դեռևս Միջին Ասիայում արդեն հասել էին ֆեոդալական հարաբերությունների զարգացման աստիճանին։ Երբ սելջուկյան հորդաները 11-րդ դարի կեսին մտան Խորասան և ապա ներխուժեցին Արևմտյան Ասիա, նրանք արդեն անցել էին ֆեոդալական հարաբերություններին, պահպանելով հանուրգ տոհմացեղային կազմակերպության և նախնադարյան հասարակության որոշ ինստիտուտներ։ Անատոլիայի սելջուկները 12—13-րդ դարերում արդեն ապրում էին ֆեոդալական հարաբերությունների դարաշրջան։ Օսմանյան թուրքերը ֆեոդալիզմի զարգացման և նրա քայքայման երկու շրջաններն անցան Օսմանյան կայսրության գոյության ժամանակ։

3. Թուրքիայի միջնադարի պատմության պերիոդիզացիայի հարցում թուրք պատմաբանների «փորձերը» զուրկ են գիտական արժեքից, իսկ ժամանակակից թուրքական պատմագրության մեջ կատարված «պերիոդիզացիան» հետապնդում է պանթյուրքիստական նպատակներ։

4. Թուրք ժողովրդի պատմության սկիզբը նետ տանելով դեպի պատմական հնագույն դարաշրջանները և փոխելով «թուրք ժողովուրդ» հասկացողության իմաստը, պատմության թուրք ֆալսիֆիկատորները փորձում են բոլոր ժամանակների և բոլոր երկրների մոնղոլ, թաթար, թուրքմեն, թուրք և այլ ժողովուրդներին մի հայտարարի բերել և անվանել «թուրք ժողովուրդ», որը ոեակցիոն պանթյուրքիզմի ժամանակակից արտահայտությունն է։ Պանթյուրքիզմի մոլեռանդ ջատագովները, նենգափոխելով «թուրք ժողովուրդ» հասկացողությունը, փորձում են թուրք ժողովրդին վերագրել ավելի բարձր մշակութային արժանիքներ, քան ունեցել են օսմանյան թուրքերի նվաճած երկրների ոչ-թուրք ժողովուրդները, մի բան, որը, ի դժբախտություն նրանց հեղինակների, չի հաստատվում պատմական իրողություններով և փաստերով։

Խոսելով «թուրք ժողովրդի» դարավոր պատմության ընթացքում ժառանգած և «թուրք ցեղին առանձնահատուկ գծերի» մասին, Բայուրը հայտարարում է. «Բնության և կլիմայի դաժանությունը (նկատի ունի Միջին Ասիան—Ա. Ս.) թուրքերին օժտել է առողջ մարմնի, հերոս բնավորության, հոգնածություն չիմանալու, հաստատակամության և տոկունության հատկանիշներով, որոնց շնորհիվ նրանք (թուրքերը) անողոքաբար ոչնչացրել են նման հատկանիշներ չունեցողներին... Այդ հատկանիշները անցնելով սերնդից-սերունդ, ավելի են ամրապնդվել և ամեն մի թուրքի համար դարձել երկրորդ բնավորություն»[26]։

Այսպես, ուրեմն, Բայուրը, գիտակցաբար թե անգիտակցաբար, հերքում է ինքնիրեն և իր գաղափարակիցներին՝ ցինիկաբար հայտարարելով, որ թուրքերը անողոքաբար ոչնչացրել են թուրքական հատկանիշներից զուրկ ժողովուրդներին, այսինքն՝ թուրքական դաժան լծի ներքո ենթադրվող ոչ-թուրք ժողովուրդներին (հայ, հույն, վրացի, սլավոն և այլ ժողովուրդներ)։

Ցինի՜կ, բայց ճշմարի՜տ խոստովանություն...

---

[26] I. H. Bayur. Նշվ. աշխ. (ընդգծումները մերն են—Ա. Ս.)։

5. Մարքսիստական պատմական գիտությունը, սովետական պատմաբանները վճռականապես մերժում են ժամանակակից թուրք պատմագրության՝ թուրքական նվաճումները և տիրապետությունը իդեալականացնելու ձգտումները և ապացուցում բոլորովին հակառակը։ Վերևում փաստերով և վկայություններով ցույց տվեցինք, որ թուրքերը, օսմանցիները իրենց նվաճած բոլոր երկրներում գարերով արգելակել են հպատակ ժողովուրդների տնտեսական, սոցիալական և կուլտուրական զարգացումը։

6. «Թուրքական արշավանքները ուղեկցվում էին քաղաքների և գյուղերի դաժան ավերումով, նյութական և կուլտուրական արժեքների կողոպուտով և թալանով, հարյուր հազարավոր խաղաղ բնակիչների գերեվարումով։ Դրանք թուրքական լծի տակ ընկած բալկանյան, կովկասյան, արաբական և այլ ժողովուրդների համար հանդիսացան պատմական աղետ, որը երկար ժամանակով կասեցրեց նրանց տնտեսական և կուլտուրական զարգացման պրոցեսը։ Դրա հետ մեկտեղ թուրքական ֆեոդալների նվաճողական քաղաքականությունը թուրք ժողովրդի համար էլ ունեցավ ծայր աստիճանի բացասական հետևանքներ։ Նպաստելով սոսկ ֆեոդալական ավազակու հարստացմանը, այդ քաղաքականությունը ուժեղացնում էր վերջինների տնտեսական և քաղաքական իշխանությունը իրենց սեփական ժողովրդի վրա։ Թուրք ֆեոդալները և նրանց պետությունը, թուլացնելով և քայքայելով երկրի արտադրողական ուժերը, թուրք ժողովրդին դատապարտում էին տնտեսական և կուլտուրական հետամնացության։

А. Х. Сафрастян

К ВОПРОСУ ПЕРИОДИЗАЦИИ СРЕДНЕВЕКОВОЙ ИСТОРИИ ТУРЦИИ

Резюме

В статье на основе марксистско-ленинской методологии рассматривается вопрос периодизации средневековой истории Турции.

Критикуя антинаучные попытки современных турецких историков, стремящихся необоснованно и искусственно отнести начало истории Турции к древнейшим временам, автор данной статьи делит средневековую историю на три стадии.

Первая охватывает период раннего феодализма, когда предки османских турок проживали в Средней Азии и вели кочевой образ жизни, вплоть до распада сельджукского государства и образования «Османского бейства» на северо-западе Анатолии (конец XIII в.).

Вторая стадия включает XIV—XVI вв.— период бурного расцвета османского военно-феодального государства, период осуществления широкой завоевательной политики в Азии, Европе и Африке и жестокого социального и политического порабощения многих народов.

Третью стадию феодализма в Турции можно отнести к периоду, начиная со второй половины XVI в. до конца XVIII в.

Выдвинутая современной турецкой историографией периодизация средневековой истории Турции лишена научной основы и преследует национально-шовинистические цели.

---

27 Всемирная история, т. IV, стр. 544.